

ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄԸ ԵՎ ԲԱՐԵՐԱՐԸ

Մենք բախտ ունեցանք ականատես և մասնակից լինելու պատմական իրադարձությանը: Ազգային-Եկեղեցական Ժողովը ընտրեց արժանավորներից ամենաարժանավորին, ողջ հայության կողմից ճանաչված և հարգված հոգևորականին՝ Գարեգին Սարգսյանին, որը իր մարդկային եզակի բարեմասնություններով, եկեղեցականի մեծ փորձով ըստ արժանվույն բազմեց Գրիգոր Լուսավորչի գահին, որպես 131-րդ Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Վեհափառին արտանց շնորհավորում է Մատենադարանի ողջ անձնակազմը: Խորապես համոզված եմ, որ այդ շնորհավորանքներին միանում է հայ մտավորականությունը թե՛ Հայրենիքում, թե՛ Սփյուռքում:

Մաշտոցի անվան Մատենադարանի աշխատակիցները վաղուց և մոտիկից ճանաչում են Գարեգին Վեհափառին որպես գիտնականի, որպես բանասերի և մեր Եկեղեցու պատմությանն ու քրիստոնեական գրականությանը նվիրված ծանրակշիռ աշխատությունների հեղինակի: Բայց քչերը գիտեն նորընտիր Կաթողիկոսին որպես Մատենադարանի ձեռագրերի հավաքածուն հարստացնող ջերմեռանդ նվիրատուի: Տարիներ շարունակ Հայաստան գալիս նա այցելում էր Մատենադարան՝ մի որևէ արժեքավոր ձեռագրով և նոր հրատարակություններով ուրախացնելով մեզ, իսկ վերջին տարիների ընթացքում հանդիսացավ շուրջ քսան ձեռագրերի, հմայիլների և հնատիպ գրքերի նվիրատու: Օրերս լույս տեսավ Մատենադարանի վաստակաշատ աշխատակից Աս. Մնացականյանի «Հայրեններ» ստվարածավալ ժողովածուն, որի հրատարակման գործում Գարեգին Վեհափառը վճռական դեր խաղաց՝ խորին գոհունակության և շնորհակալության զգացումներով լցնելով բոլոր մատենադարանցիների և, կարծում եմ, բոլոր բանասերների սրտերը մեր երջանկահիշատակ գործընկերոջ աշխատության տպագրության համար:

Ս. Էջմիածնի և Մաշտոցյան Մատենադարանի վաղեմի սերտ համագործակցությունը Գարեգին Վեհափառի գահակալության ընթացքում, համոզված եմ, ավելի են ամրանալու հայոց դարձի 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստման տարիներին: Այս տարիները Գարեգին

Վեհափառի, որպես նվիրյալ հոգևորականի, աստվածաբանի և գիտնական բանասերի, նոր լիցք են հաղորդելու մեր գիտական կյանքին՝ նպատակամղելով մեր գիտնականներին լրացնելու հայագիտության, աստվածաբանության և Եկեղեցու պատմության բաց էջերը:

Արնշատություն և քաջառողջություն ազգի և Աստծո ընտրյալին:

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ
Մատենադարանի տնօրեն